ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու
ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ
ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն
և քրեակատարողական քաղաքականության մշակման
վարչության պետի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՀՀ-ՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հոդվածում վերլուծվել են խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից հանձնաժողովների ինստիտուցիոնալ կառուցվածքի, վերջիններիս գործունեության արդյունավետության հարցերը, ներկայացվել են հանձնաժողովների ինստիտուցիոնալ կառուցվածքի բարեփոխման հնարավոր տարբերակները:

Հիմնաբառեր- *խնամակալություն և հոգաբարձություն, հանձնաժողովներ, երեխայի իրավունքներ:*

Յուրաքանչյուր պետության քաղաքականության կարևորագույն ուղղություններից է երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ըստ այդմ՝ ընտանիքի նկատմամբ հատուկ վերաբերմունքի և ուշադրության ցուցաբերումը՝ որպես երեխայի բնականոն զարգացումը ապահովող կարևորագույն գործոն: Հաշվի առնելով երեխաների անհատականության բազմակողմանի զարգացման, վերջիններիս հատուկ հոգածություն և օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտությունը՝ երեխաների իրավունքների պաշտպանության խնդրի կարևորությունն ընդգծվում է նաև միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես, երեխաներին հատուկ հոգածություն տրամադրելու անհրաժեշտությունը նախատեսված է «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիայով, 1959 թվականի նոյեմբերի 20-ին Գլխավոր ասամբլեայի ընդունած «Երեխայի իրավունքների հռչակագրով», «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին», «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրերով և այլ միջազգային փաստաթղթերով: Երեխաների իրավունքների պաշտպանության խնդրի կարևորությունը ընդգծվում է նաև ՀՀ Սահմանադրությամբ[1] (այսուհետ՝ Սահմանադրություն) երեխաների իրավունքների՝ որպես հիմնական իրավունքների ամրագրմամբ: Ընդ որում՝ պատահական չէ նաև այն, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում՝ Սահմանադրության 86-րդ հոդվածով, որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ, սահմանադրորեն ամրագրվեց երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով՝ յուրաքանչյուր պետություն մշակում և իրականացնում է որոշակի քաղաքականություն: ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է եռաստիճան համակարգի միջոցով, որը ներդրվել է 2005 թվականից: Չնայած երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի ձևավորմանը՝ համակարգի ոչ բոլոր օղակներն են արդյունավետ գործում, ինչը պայմանավորված է և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ գործոններով: Այսպես՝ երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի օղակներն են՝

1) Ազգային հանձնաժողովը - ստեղծվել է ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N 835 որոշմամբ, իսկ Հանձնաժողովի նոր կանոնադրությունը և անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N

www.ardaradatutyunjournal.com

1295 որոշմամբ[2]:

2) Մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության մարզային բաժինները:

3) Տեղական ինքնակառավարման մարմինները՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները, ինչպես նաև դրանց կից հանձնաժողովները:

Նշվածի համատեքստում անդրադառնանք եռաստիճան համակարգից՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթների ընդհանուր բնութագրին: Այսպես, խնամակալության և հոգաբարձության ինստիտուտը իր բնույթով համալիր ինստիտուտ է, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ խնամակալության և հոգաբարձության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիաիրավական, վարչաիրավական, ընտանեկան հարաբերությունները կարգավորող համապատասխան նորմերով: Այսպես, խնամակալության և հոգաբարձության հարցերը կարգավորվում են ՀՀ ընտանեկան օրենսգրքով[3] (այսուհետ՝ Օրենսգիրք), ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում խնամակալության և հոգաբարձության մարմինների կարևորության վկայությունն է վերջիններիս վերապահված գործառույթների լայն շրջանակը: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված հիմնական գործառույթները նախատեսված են Օրենսգրքով: Այսպես՝ Օրենսգրքով վերջիններիս վերապահված գործառույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց շրջանակը բավականին լայն է: Այդ գործառույթները, ելնելով վերջիններիս էությունից և բովանդակությունից, կարելի է պայմանականորեն դասակարգել հետևյալ խմբերի՝

• գործառույթներ, որոնք կապված են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման, խնամքի նկատմամբ վերահսկողության իրականացման հետ,

• գործառույթներ, որոնք կապված են երեխային առնչվող հարցերով ծնողների կամ վերջիններիս և երեխայի խնամակալի միջև առաջացած տարաձայնությունների լուծմանը,

• գործառույթներ, որոնք կապված են դատարանում որոշակի կատեգորիայի գործերով պարտադիր քննությանը մասնակցություն ապահովելուն,

• գործառույթներ, որ կապված են դատարանում երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով որոշակի հայցապահանջների ներկայացմանը,

• այլ գործառույթներ:

Չնայած երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգում խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված կարևոր դերակատարմանը, այդ համակարգը դեռևս չի ապահովում անհրաժեշտ արդյունավետություն: Այս հանգամանքը արձանագրվել է ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694 որոշմամբ արձանագրվել է, որ 2005 թվականին ՀՀ-ում ներդրված՝ երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը ունի ինստիտուցիոնալ-կառուցվածքային որոշ թերություններ, որոնք էականորեն ազդում են այդ բնագավառում վարվող քաղաքականության արդյունավետության վրա և, ըստ այդմ, որպես ռազմավարական կարևոր ուղղություն ընդգծվել է ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը ինստիտուցիոնալ-կազմակերպական բարեփոխումների ենթարկելու անհրաժեշտությունը:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների, դրանց կից գործող հանձնաժողովների գործունեության արդյունավետությունը գնահատվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» 2017 թվականի արտահերթ հրապարակային զեկույցում, որտեղ որպես ոլորտի հիմնական խնդիրներ առանձնացվել են աշխատակազմի ցածր մոտիվացվածությունը, այդ մարմինների գործունեության վերահսկողության և անդամներին պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների անլիարժեքությունը, աշխատակազմի արհեստավարժության պակասը, վերջիններիս գործունեության մեթոդաբանության բացակայությունը[4]:

2012 թվականին ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին 45 հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված այլընտրան-

քային զեկույցում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները մատնանշվել են որպես եռաստիճան համակարգի ամենաթույլ օղակ, որոնց գործունեությունը կրում է ձևական բնույթ: «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության կողմից ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին 2012 թվականին ներկայացված զեկույցում արձանագրվել է, որ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից կայացվող որոշումների մեծ մասը կայացվում է (լավագույն դեպքում) երեխային կամ ծնողին մեկ անգամ տեսնելուց հետո՝ առանց որևէ խորքային ուսումնասիրության և հետագա հսկողական աշխատանքի կատարման: «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության դիտարկումների համաձայն ևս՝ հաշվի առնելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության թերությունները ու խնդիրները՝ առավել նախընտրելի է աշխատանքը սոցիալական ինտեգրված ծառայությունների հետ[5]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անդրադառնանք խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից հանձնաժողովների գործունեությանը, ինստիտուցիոնալ կառուցվածքին: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին և դրանց կից հանձնաժողովներին անդրադարձ է կատարվում Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասում, որտեղ նշվում է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են: Նշված հոդվածի նույն մասում սահմանվում է, որ խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, որոնց կազմը հաստատում է համայնքի ղեկավարը: Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատում է ՀՀ կառավարությունը: Այսպես՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատված է ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում)[6]: Որոշմամբ կարգավորվում են խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթների, խնդիրների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետ կապված հարցերը: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողով) հետ կապված հարցերը կարգավորվում են Որոշմամբ հաստատված կանոնադրության 4-րդ գլխում:

Հանձնաժողովի դերը և գործառույթները: Հանձնաժողովը խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվող խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական հիմունքներով (Որոշման 11-րդ կետ): Գործող կարգավորմամբ Հանձնաժողովի գործունեությունն իր բնույթով խորհրդատվական է, և Հանձնաժողովի անդամներն իրենց գործառույթներն իրականացնում են անհատույց, այն է՝ հասարակական հիմունքներով: Բնական է, որ նման կարգավորման առկայությունը բազում խնդիրներ է առաջացնում Հանձնաժողովի գործունեության արդյունավետության տեսանկյունից, քանի որ Հանձնաժողովը չի տիրապետում իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների: Հանձնաժողովի կազմում ընդգրկվող անդամները որպես Հանձնաժողովի անդամ՝ լրացուցիչ չեն վարձատրվում, և միաժամանակ, վերջիններս ծանրաբեռնված են այլ աշխատանքային պարտականությունների կատարմամբ, ինչը, միանշանակ, բացասական է ազդում նաև կատարվող աշխատանքի որակի վրա:

Այլ կերպ ասած՝ առանց որևէ վարձատրության նախատեսման դժվար է ակնկալել Հանձնաժողովի անդամի կողմից իր առջև դրված գործառույթների պատշաճ իրացում, իսկ հաշվի առնելով այն, որ Հանձնաժողովը չունի նաև իր գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորում, ակնհայտ է, որ դրա ստեղծումը չի արդարացնում այն նպատակները, որոնց հասնելու համար ի սկզբանե նախատեսվել է նման հանձնաժողովի ստեղծումը: Ուշադրության է արժանի այն, որ օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, Մեծ Բրիտանիայում, Լեհաստանում, Խորվաթիայում համանման մարմինները չեն գործում հասարակական հիմունքներով, և վերջիններիս իրենց գործառույթների իրականացման համար հատկացվում են անհրաժեշտ նյութական միջոցներ[7]:

Անդրադառնանք նաև խնամակալության համակարգերի միջազգային փորձի ուսումնասիրությանը և վերլուծությունը: Այսպես, Եվրոպական երկրներում, սովորաբար, խնամակալների նշա-

www.ardaradatutyunjournal.com

նակման համար պատասխանատու են դատարանները: Դատարանի կողմից խնամակալի նշանակումը կարող է հիմնվել անհատի կամ իրավասու պետական մարմնի դիմումի հիման վրա կամ դատարանի սեփական նախաձեռնությամբ: Ցանկացած անհատ կամ մարմին կարող է դիմել խնամակալության գործընթացը սկսելու համար՝ խնամքի կարիք ունեցող երեխայի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելով երեխայի խնամքի հաստատություններ կամ ուղղակիորեն իրավասու դատարան: Սա վերաբերում է խնամքի կարիք ունեցող բոլոր երեխաներին՝ անկախ վերջիններիս ազգությունից: Պատասխանատու դատական մարմինները գնահատում են յուրաքանչյուր գործ և որոշում, թե արդյո՞ք խնամակալի նշանակման բոլոր անհրաժեշտ պայմանները պահպանված են: Դատարանները կարող են դիմել երեխաների պաշտպանության, բարեկեցության կամ այլ իրավասու մարմինների օժանդակությանը:

Գերմանիայում, օրինակ, եթե խնամակալի նշանակման անհրաժեշտ պայմանները պահպանված են, ընտանեկան դատարանը որոշում է կայացնում երեխային խնամակալ նշանակելու մասին: Ընտանեկան դատարանը նշանակում է համապատասխան անձին որպես երեխայի խնամակալ՝ երիտասարդների բարեկեցության գրասենյակի դիրքորոշումը լսելուց հետո (վերջինս առաջարկում է խնամակալի թեկնածուին): Հրատապ դեպքերում, ընտանեկան դատարանը կարող է խնամակալ նշանակել առանց երիտասարդների բարեկեցության գրասենյակի դիրքորոշումը լսելու: Եթե հնարավոր չէ գտնել համապատասխան թեկնածու, ապա երիտասարդների բարեկեցության տեղական գրասենյակը կարող է նշանակվել որպես խնամակալ[8]:

Նիդեռլանդներում երեխայի ծնողները կարող են ընտրել որևէ կոնկրետ անձի՝ երեխայի խնամակալ կամ հոգաբարձու լինելու համար: Նրանք կարող են նաև Նիդեռլանդների ծնողական պատասխանատվության ռեգիստրում գրանցել կոնկրետ անձի տվյալները՝ իրենց մահվան դեպքում երեխայի խնամակալը կամ հոգաբարձուն լինելու համար: Մյուս իրավական հնարավորությունը դատարանի կողմից երեխայի խնամակալ նշանակելն է[9]:

ԵՄ անդամ պետությունների մեծամասնությունում խնամակալության և հոգաբարձության պարտականությունը դրված է վարչական կամ տեղական իշխանությունների վրա: ԵՄ անդամ շատ պետություններ վստահում են խնամակալության գործառույթը համայնքային կամ տեղական սոցիալական ծառայություններին: Խնամակալության համար պատասխանատու կարող է լինել կենտրոնական որևէ հաստատություն՝ ամբողջ երկրի մակարդակով, կամ ռեգիոնալ կամ տեղական հաստատություն:

Լեհաստանում սոցիալական ծառայությունները ռեգիոնալ և տեղական մակարդակով նույնականացնում են համապատասխան գործերը, կազմակերպում են երեխաների խնամքը և նշում խնամակալ նշանակելու անհրաժեշտությունը: Օտարերկրացիների դեպքում, «Լեհաստանում օտարերկրացիների խնամակալության վերաբերյալ» 2003 թվականի հունիսի 13-ի օրենքը սահմանում է, որ խնամակալ կարող է նշանակվել գրասենյակի ղեկավարի (ազգային մակարդակի հաստատություն) դիմումի հիման վրա: Խնամակալության վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող մարմինը ընտանիքի դատարանն է, որը գործում է տեղական մակարդակում:

Լատվիայում, օրինակ, խնամակալներին նշանակում է ծնողազուրկ երեխաների դատարանը, որը տեղական ինքնակառավարման մարմնին ենթակա կազմակերպություն է[10]:

Վրաստանում խնամակալության և հոգաբարձության գործառույթները համակարգում են Առողջապահության, աշխատանքի և սոցիալական գործերի նախարարության հատուկ ծառայությունը՝ Խնամակալության և հոգաբարձության ստորաբաժանումը և դրա տարածքային գործակալությունները:

Խորվաթիայում այս գործառույթն իրականացնում են Սոցիալական ապահովության կենտրոնը և Խնամակալության կենտրոնը, որոնք հիմնադրվել են Սոցիալական ապահովության նախարարության կողմից[11]:

Բելգիայի խնամակալության և հոգաբարձության մարմինը խնամակալության ծառայությունն է (Guardianship Service), որը գործում է Բելգիայի Արդարադատության նախարարության կազմում[12]:

Ֆինլանդիայի քաղաքացի հանդիսացող, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամակալության համար պատասխանատու են երեխաների պաշտպանության տեղական ծառայությունները[13]:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող պատասխանատու մարմիններ

ԵՄ անդամ պետություն	Արտաքին հսկողություն	Ներքին հսկողություն
Ավստրիա	Շրջանային դատարան	Երեխաների և երիտասարդների բարեկեցության գրասենյակներ
Բելգիա	Քաղաքացիական դատարան	Խնամակալության մարմին
Բուլղարիա	Երեխայի պաշտպանության պետական մարմին	Քաղաքապետարան
Կիպրոս	Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն	Երեխաների և ընտանիքի վարչության պետ, որին ենթակա են սոցիալական բարեկեցության գրասենյակները
Չեխիա	Դատարան, դատախազ	Երեխաների սոցիալական և իրավական ապահովության վարչություն
Գերմանիա	Ընտանեկան դատարան	Երիտասարդների բարեկեցության գրասենյակ
Դանիա	Դատարան	Համայնքային մակարդակով գործող պետական վարչակազմ, Կարմիր Խաչ
Էստոնիա	Դատարան	Քաղաքապետարան
Հունաստան	Դատարան	Չկա
Իսպանիա	Դատախազություն	Ինքնավար համայնքի երիտասարդության բարեկեցության իշխանություն
Հունգարիա	Արդարադատության նախարարության դատական ծառայությունների կենտրոն	Խնամակալության մարմին, Սոցիալական բարեկեցության և խնամակալության մարմին, Սոցիալական հարցերի և երեխաների պաշտպանության գլխավոր վարչություն
Իտալիա	Անչափահասների դատարան	Չկա
Լատվիա	Ծնողազուրկ երեխաների դատարան	Երեխաների իրավունքների պաշտպանության համայնքային մարմին
Ֆրանսիա	Դատարան	Չկա
Ֆինլանդիա	Ընտանեկան և երեխաների դատարան	Ֆինլանդական միգրացիոն ծառայության ներքո գործող ընդունելությունների կենտրոնները
Պորտուգալիա	Ընտանեկան և երեխաների դատարան	Չկա
Իռլանդիա	Ընտանեկան և երեխաների դատարան	Առողջության տեղեկատվության որակի կառավարման մարմին
Իտալիա	Անչափահասների դատարան	Չկա
Լիտվա	Դատարան	Երեխաների իրավունքների պաշտպանության համայնքային բաժանմունք
Լյուքսեմբուրգ	Դատարան	Ընտանիքի և ինտեգրման նախարարություն
Մալթա	Անչափահասների դատարան, Երեխաների և երիտասարդների խորհրդատվական խորհուրդ	Չկա
Հոլանդիա	Անչափահասների դատարան, երիտասարդների խնամքի տեսչություն	Չկա
Լեհաստան	Խնամակալության դատարան, ընտանեկան դատարան	Չկա
Ռումինիա	Դատարան	Սոցիալական աջակցության և երեխաների պաշտպանության գլխավոր վարչություն
Շվեդիա	Վարչաշրջանի խորհուրդ, որը ղեկավարվում է գլխավոր խնամակալի կողմից	Գլխավոր խնամակալ
Սլովենիա	Աշխատանքի, ընտանիքի, սոցիալական ապահովության և հավասար հնարավորությունների նախարարություն	Սոցիալական աշխատանքի կենտրոն
Սլովակիա	Դատարան	Աշխատանքի, սոցիալական հարցերի և ընտանեկան գրասենյակ
Միաց յալ Թագավորություն	Չկա	Չկա[14]

www.ardaradatutyunjournal.com

Այսպես, միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով կարող ենք հանգել այն հետևության, որ այլ երկրներում խնամակալության և հոգաբարձության ոլորտում պատասխանատու են՝

* դատարանները,
* տեղական իշխանության ներկայացուցիչները,
* սոցիալական ծառայությունները,
* խնամատարության ծառայությունները (կարող են գործել արդարադատության նախարարության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կամ այլ ենթակայության ներքո):

Համադրելով նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, հաշվի առնելով նաև Հանձնաժողովի գործունեության արդյունքում արձանագրված խնդիրները՝ կարևոր է նաև դրա ինստիտուցիոնալ բարեփոխման խնդրի դիտարկումը: Որպես երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի այս օղակի բարեփոխում՝ կարող են դիտարկվել հետևյալ տարբերակները՝

* **Վերացնել Հանձնաժողովները** - այս տարբերակի թերությունն այն է, որ Հանձնաժողովի վերացման դեպքում վերջինիս ողջ ծանրաբեռնվածությունը բաժին է ընկնելու տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք առանց այդ էլ խնամակալության և հոգաբարձության ոլորտում իրենց պարտականություններին վերաբերում են որպես լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Ըստ այդմ, այս պարագայում ևս հարցականի տակ կարող է դրվել երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ձեռնարկման պատշաճ որակի ապահովումը:

* **Վերացնել Հանձնաժողովները** և վերջիններիս վերապահված գործառույթները պատվիրակել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ըստ այդմ, Նախարարության կազմում ստեղծելով խնամակալության և հոգաբարձության հարցերով առանձնացված ստորաբաժանում և դրա տարածքային բաժինները: Սա համահունչ է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով[15] (Հավելվածի 1-ին կետ) վերապահված առանձին ոլորտների համակարգման գաղափարին, որի համաձայն՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում և իրականացնում է կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: Նշվածի արդյունքում հնարավոր կլինի ապահովել նաև պատշաճ վերահսկողության իրականացումը:

* **Նախատեսել Հանձնաժողովների գործունեության համար բավարար նյութական և ֆինանսական միջոցներ** - այս ամենը պետք է ընդգրկի ինչպես Հանձնաժողովի անդամներին տրամադրվող լրացուցիչ վարձատրությունը, այնպես էլ որոշակի ֆինանսական հատկացումներ հանձնաժողովի ընթացիկ գործունեության ապահովման համար: Արդյունքում՝ հնարավոր կլինի ապահովել Հանձնաժողովի անդամների մոտիվացիան՝ իրենց վերապահված պարտականությունները պատշաճ կատարելու համար, և ըստ այդմ՝ կբարձրանա նաև երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների որակը:

* **Հանձնաժողովի կազմում ապահովել առավելագույն ներկայացվածություն մասնավոր հատվածից (Հասարակական կազմակերպություններ)** – այսպես, ներկայումս Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ) (Որոշման 14-րդ կետ): Անհրաժեշտ է ըստ այդմ դիտարկել մասնավոր հատվածի առավել ներգրավածության ապահովման հարցը, որպեսզի Հանձնաժողովի անդամները հնարավորություն ունենան առաջնահերթորեն կատարել, որպես հանձնաժողովի անդամ, իրենց առաջադրվող գործառույթները: Այս տեսանկյունից կարելի է առավել արդյունավետորեն օգտագործել նաև քաղաքացիական հասարակության կամ ոլորտում երկար տարիների գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների ներուժը:

[1] Ընդունվել է 06.12.2015թ.: Ուժի մեջ է մտել 22.12.2015թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118-րդ:
[2] Ընդունվել է 28.12.2012թ.: Ուժի մեջ է մտել 07.01.2013թ.: ՀՀՊՏ 2012.12.28/66(940).1 Հոդ.1422.11-րդ:
[3] Ընդունվել է 09.11.2004թ.: Ուժի մեջ է մտել 19.04.2005թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդ.60-րդ:
[4] Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների և Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, հասանելի է http://www.ombuds.am/images/Final.pdf հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
[5] Տե՛ս, Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան, Երևան 2015, հասանելի է՝ https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
[6] Ընդունվել է 02.06.2016թ.: Ուժի մեջ է մտել 09.07.2016թ.: ՀՀՊՏ 2016.06.29/50(1230) Հոդ.603-րդ:
[7] Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների և Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, հասանելի է http://www.ombuds.am/images/Final.pdf հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
[8] Տե՛ս, Guardianship systems for children deprived of parental care in the European Union, հասանելի է http://fra.europa.eu/en/publication/2015/guardianship-children-deprived-parental-care հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
[9] Տե՛ս, https://www.government.nl/topics/family-law/question-and-answer/how-do-i-become-a-child%E2%80%99s-guardian
[10] Տե՛ս, Guardianship systems for children deprived of parental care in the European Union, հասանելի է http://fra.europa.eu/en/publication/2015/guardianship-children-deprived-parental-care հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
[11] Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների և Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, հասանելի է http://www.ombuds.am/images/Final.pdf հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
[12] Տե՛ս, https://justitie.belgium.be/sites/default/files/downloads/Mena-EN.pdf հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
[13] Տե՛ս, Guardianship systems for children deprived of parental care in the European Union, հասանելի է http://fra.europa.eu/en/publication/2015/guardianship-children-deprived-parental-care հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
[14] Տե՛ս, նույն տեղում:
[15] Ընդունվել է 23.03.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: ՀՀՊՏ 2018.03.30/25(1383) Հոդ.446-րդ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015թ.: Ուժի մեջ է մտել 22.12.2015թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118-րդ:
2. ՀՀ վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N 835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1295 որոշում: Ընդունվել է 28.12.2012թ.: Ուժի մեջ է մտել 07.01.2013թ.: ՀՀՊՏ 2012.12.28/66(940).1 Հոդ.1422.11-րդ:
3. ՀՀ ընտանեկան օրենսգիրք: Ընդունվել է 09.11.2004թ.: Ուժի մեջ է մտել 19.04.2005թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդ.60-րդ:
4. Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը:
5. Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան, Երևան 2015:
6. ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշում: Ընդունվել է 02.06.2016թ.: Ուժի մեջ է մտել 09.07.2016թ.: ՀՀՊՏ 2016.06.29/50(1230) Հոդ.603-րդ:
7. Guardianship systems for children deprived of parental care in the European Union:
8. https://www.government.nl/topics/family-law/question-and-answer/how-do-i-become-a-child%E2%80%99s-guardian
9. https://justitie.belgium.be/sites/default/files/downloads/Mena-EN.pdf հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:

Сурен Крмоян
Кандидат юридических наук

Шушаник Гукасян
Заместитель начальника отдела по разработке антикоррупционной и уголовно-исполнительной политики Министерства юстиции Республики Армения,
аспирант кафедры гражданского права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Некоторые вопросы касающиеся деятельности опекунских комитетов

В статье проанализирована институциональная структура комитетов по опеке, представлены вопросы их эффективности и возможные варианты институциональных структурных реформ.

Ключевые слова: опека, комитеты, права ребенка.

Suren Krmoyan
Candidate of Legal Sciences

Shushanik Ghukasyan
Deputy Head of Department for Drafting Anti-Corruption and Penitentiary Policies of the Ministry of Justice of the Republic of Armenia
PhD Student of Civil Law Chair of YSU Faculty of Law

SUMMARY

Certain issues regarding the activity of guardianship committees

The article analyzed the institutional structure of guardianship committees, their effectiveness issues, possible options of institutional structural reforms were presented.

Key words: guardianship, committees, child rights.

Ընագիրը ներկայացվել է 23.01.2019թ.
Ընդունվել է տպագրության 22.03.2019թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Քոչարյանը